Ղրուապատոյ 'ի Բարբերաց, 'ի Պարսս և 'ի Հեպեղոս իմաստուՐեՁ ՊՁգիս Հայասպանեայց [1] :

Գ.

Այդ սուղ ինչ օգտեն և բարերարացն իմաստութեան առատութիւն և սատարողացն ջան, եթէ ոչ հաւասար և զուգակիր լիցի փոյթ որոց մատակարարիցինն։ Ել ուրուք լցցի կարօտութիւն՝ եթէ գանձի պատահեալ առանց ձեռին կարկառման անցեալ երթիցէ, կամ թէ առեալ յումպէտս ընդ վայր վատնիցէ. և որպէս 'ի բանակի համախորհուրդ ջան և վաստակ պահանջի և 'ի սպարապետէն և 'ի զօրագլխացն և 'ի զօրականաց առ 'ի յամբոկ յաղթութեանն պատերազմին, նոյն և 'ի մերումս իրի. նովին հոգւով անկ է վառել հետևողացդ իմաստուՐ՝ որով բարերարքն ձեր ջեռան, և սատարողքն բորբոքեցան. որպէս զի առհասարակ լիցի ազգիս իբրև զանտառ մեծ միով հրով հարթ հաւասար հրդեհել։ Այլ եթէ տակաւին ոչ շնորհեցաւ ամենեցուն առնուլ զՁերմութիւն և զլոյս իմաստութեան, զիարդ և է ինչ պատՁառանօք, դուք որք այժմէն 'ի դպրոցս դեգերիք 'ի սուրբ ատրուշանս անծախական հրոյն, գիտասջիք դուք քաջ զպարտս և զյատուկ շնորհդ, և զնուազութիւն եղբարց ձերոց յանձինս ընուլ մի՛ վերջասջիք։ Արանի՛ է ձեզ, զի որում հարքն ձեր ցանկացան և հալեցան՝ գտողք եղէք անաշխատ. նոքա տեսանեն դեռ ևս, և ձեզ միայն տուեալ է վայելել. նոքա զքաղցրութեան իմաստից գիտացին զՁաշակս, դուք փորձով իմացարուք. 'ի նոյանէ խուսարին օրէնք բարձան, այլ ձեզ տուաւ 'ի լոյս թևապարել. գիտացին նոքա զօգուտ իմաստութեան՝ առանց կարելոյ 'ի ձեռս զնոյն բերել, որպէս ձեզդ եղև մարթ։ Արանի՛ ուրեմն պարտականք իցէք անզուգական շնորհին՝ զոր անարգամեծար տէրն պարգևեաց ձեզ 'ի բիւրուց ընտրելոցս ազգակցաց. զի անշուշտ սա և յաստուածայինսն որ մարդումն պարգևին շնորհք՝ զառաջնագոյն տեղիսն ունի. իբր զի եղելութեամբ ծննդեան 'ի կեանս վայելեմք անխտիր, այլ իմաստութեամբ՝ 'ի բարուքն կեալ։ Այլ իցէ՞ բնաւ որ յայսմհետէ վատութեամբ ապախտ առնիցէ զսովաւ, կամ 'ի ծրարս ինչ ծուլութեամբ ծրարեալ անծննդական գործիցէ զամենաբարին գանձ։ Այթէ աղմուկք խազմարարք ըստ խժական ազանց սահմանի, կամ նախանձ ինչ մեհենասէր քրմաց, կամ թերութի քաջահնչող հեգենայից, և կամ որ այլ այսպիսի ինչ, զի չասացից զԱրբենացւոյ մեղադրութիւնսն, զնախնեօք մերովք զանուսումնութե արկին նախատինս, ո՞րքան յայժմուս դեպ ժամանակ զնոսին ջնջել և ուսումնասիրութեանն անուամբ պսակել, որպէս և էն արժանի, զզարմ Հայկայ։

Հապա մանկունք առաքինիք, և համօրէն Հայաստանեայց աշակերտութիւնք, զորս յառաջատեսութի Բարձրելոյն ընտրեաց առ սիրալիս գործ, 'ի նորոգումն կործանելոյ տաՁարին իմաստութեան յայրարատեան բարձանց. 'ի նոյն կատար արդ արձանացեալ իմաստութիւն որպէս ծիրանեփառ թագաւոր՝ հրաւէր ձեզ կարդայ որդւոց նախնի փարազանց աշխարհի. Ի՞հաւասիկ ես "արմատայ "ոստք իմ ոստք փառաց և շնորհաց... "Ի՞ատերուք ամենեքեան որք ցան"կացեալ էք ինձ, և յարմտեայ իմոց "յագեցարուք"։ Այս լոյս կարգեալ 'ի գլուխս Ճանապարհին անմահութեան, ես ինքն Ճանապարհ և ես օթևանն հանգստեան. ընթացարուք քաջութեամբ և լերուք հաւատարիմք առ ինամանն ձեր Աստուած, առ բարերարագ որք 'ի նմանէ յարուցան,

[1] Տես երես 338, 355։

և առ սատարողսն ձեր, առ ազգդ կարօտեալ, և առ անձինս ձեր համ-բուն։

Հաւատարիմք նախ առ Աստուած լինել պարտք են հետևողացդ իմաստութեան, 'ի խորոց հոգւոց երախտահատոյցք նմա գոլով վասն գիւտի շնորհիդ. զոր թէպէտ բազում անգամ յեղյեղեցի, այլ և դարձեալ ասեմ՝ թէ ջիք իբրև զնա։ Օ՛ի զի՞նչ է որով գլեցէ մարդ զընդարեգակամբքս. ապաքէն հոգի պատկեր Աստուծոյ, որով միայն յամենայն նիւթականաց վերացեալ՝ 'ի նախատիպն իւր յօգանայ, յեթերաձեմ սահմանէն իջեալ՝ անդրուվարեալ ընդ երկրաքարշ մարմնովս՝ թեթևացուցանէ թռուցանէ, 'ի նոյն դարձեալ յաստուածայինն վերաչուէ կայս. սակայն յուշ, մի՛ կարի երագես վարգես հոգի՛դ իմ յազատ սահմանն. զի թէ ոչ սանձ քեզ առեր զիմաստութիւն և մտրակ անկուշող մարմնոյդ, համօրէն 'ի դուրս և 'ի վիհս անելանելիս քեզ անկանել պիտի։ "Երձենալ առ Աստուած բարի է յոյժ, քաջիմաստն իմ ասէ Պագիստրոս, և ոչ այլ ինչ հնար մերձենալոյ՝ եթէ ոչ գիտուն թեամբ լուսաւորել զանձն"։ Ո՛հ մանկունք, ո՛վ պարապողք իմաստութե՛ն, տեսէք որպիսո՛ւմ բարւոյ նուիրեալ են սակաւ և գիւրանցիկ ամբ աշակերտութեանդ. եթէ վայրապար կորուսջիք զայս, զի՞նչ այլ մնայ ձեզ պատուականագոյն քան զայն կորուսանել։ Ո՛վ ժամանակ ժամանակ, միակ ճոխութիւն մարդոյ և իմաստութի՛ն, ո՛վ կեանք իմ և իմոց համազգեաց. ո՛րքան ուիշդք են մահացուք 'ի ճառեն զքէն, և ո՛րքան առատք 'ի վաճառեն. և զքեզ մանաւանդ, ժամանակդ ժամանակաց, ծայրակարմիր արշալոյս կենաց մանկութեան առաւօտի, զքեզ դեռափթիթ բողբոջ դալարազուարճ, որ 'ի ծրարս ծայրիդ բարձեալ բերես ընդ փափուկ թերթիւք ամացդ պատատեալ զծաղիկ արքուն հասակին և զպտուղ կատարեալ մարդկութեան սերմամբն հանդերձ անմահութեան յաչացս ծածկելոյ. ո՛հ, մի՛ լիցի զքեզ զգրաւականդ յաւիտենականութեան կորուսանել իմոյին գրոհի հետևողաց իմաստութեան, և մի՛ ապա 'ի զուր նստել 'ի լաց և ժտել զդարձ քո Աստուծոյ, որ ոչն երբէք այդմ լսէ. զի որ մի և եթ հոգի զուգեաց մարդոյս, մի միայն հաստատեաց և մանկութիւն՝ նշան և վկայ հետևեալ կենացն որ աստ և. որ 'ի հանդերձեալսն։

Հաւատարիմք լերուք և առ Աստուածաբերարան ձեր, որք ձրի ընձեռեալ ձեզ զընծայեալսն ինքեանց Աստուծոյ, և ոչ ինչ աւելի 'ի ձէնջ խնդրեն՝ բայց զի ընկալուչք և վայելողք նոցին լինիջիք. և զի՞նչ քան զայս հեշտին և ցանկալի. կամ զի՞նչ անմտագոյն և անագորոյն քան զայն՝ զի ապաիտ ոք զսովաւ արասցէ։ Ո՛՛ թէ գիտէիք քանի՛ անշքութիւն սպառնայր ձեզ խրթնացեալ բաղդ ազգիս, եթէ ոչ սոցա թափեալ հանեալ էր զձեզ և 'ի դրունս պայծառութեան մեծի կացուցեալ։ Ո՛՛հ, արտասուք արեան խառնին յերակունս սրտիս յորժամ յիշեմ զզրկեալսդ յայսց շնորհաց՝ 'ի խաւարային բանտս մտաց դանդաչեալս, ստուերակերպ իմն թափառումն առնելով յերեսս երկրի, տաժանմամբ ստանձնեալ զծանրութիւն կենաց սուղ ինչ 'ի վերոյ քան զՋոլիրս պաճարաց կացեալ, որոց ոմանց թերևս 'ի ձէնջ հանդերձեալ էր արածողս լինել. կամ 'ի խուան ասիական տարաբաղդիկ ազանց խառնակեալ՝ բազում անգամ քմազարդ հաճոյից տերանց բռանց արքանեկելով, կամ առ դոյզն շահու յանփառունակ գործ զանձինս մատնելով. կամ առ 'ի չբգոյէ բաւական խելաց և մտաց՝ նենգաւ և մանկաւ զընկերին հանելով, և որպէս հաւորսք յար դարանաք և թակարդովք շրջելով, միանգամայն և անձանց զգուշացեալ 'ի հզօրագունեցին ծուղակաց, և համօրէն 'ի չքնաղից և յաստուածակերպն դիմաց ի-

մաստութեան զիրկք ելով՝ վարկպա-
բազի ընթացիւքն հասանել 'ի կէտն
կենաց՝ յաՀախ անգէտք անտեացն։

Իսկ այժմ, ո՛վ սքանչելեացս, քա-
նի՞ այլակերպս և վեհս զձեզ տեսա-
նեմ յայնմանէն. որպէս գեղազարդ
ձագունք ծաղկաՀեմք 'ի միջոյ գետ-
նասող զեռնոց ոմանց յանկարծոյն
թևացեալ վերացեալ յազատութի՛ն
օդոց Հեռուղաբար ձայնիւք խոսալ
խայտալ. զՀառս ձեր լսեմ 'ի բանա-
սիրաց կաՀառս, և զմատեանսդ 'ի
գրանոցս ընթեռնում, և ընդ թարգ-
մանութիւնս օրինակագրացդ յօտար
լեզուս յաւէտ սիրանամ։ Ինդութե՛ն
արտասուք ելանեն 'ի լիՀ լուսոյս յոր-
ժամ 'ի դահլիՀս մեծամեծաց զՀայ-
կական մատանցդ զծնունդս տեսա-
նեմ 'ի նկարս և 'ի քանդակս, զսիրե-
լին իմ զգրիգորեան քահանայու-
թիւնս կերպարանեալ եդեմական ին
ծաղու, կամ զահեղ մեծութի՛ն Հայկ-
ազնեան դիւցազանց ցոլակն աչօք,
հերապանծ գիսակօք, քաջալանջ և
թիկնաւէտ իրանօք, բարձր և յաղթ
հասակաւ, երագ և առ ամենայն
պատրաստ ձեռօք, և Հսկայաբար նա-
զանօք։ Օ՜ոմն 'ի ձէնջ տեսանեմ ան-
զբաղօրէն ՝ուռենեաւ ոմամբ կամ
սաղարթազուարՀկաղամախեաւն Հո-
վանաւորեալ՝ զբնութեան պատկեր
նախ յաչսն և 'ի սիրտ նկարելով ըստ
ամենայն Հրաշարուեստքատակի տիե-
զերագործ մատինն, և ապա 'ի ջեռ-
նուլ ախորժակացն մղումն ձեռին տա-
լով՝ ՀշգրիտՀ իմն քան զնախատիպն
յերանգ և 'ի ձև ածել 'ի քարտին։
Եւ 'ի Հրապարակն անցեալ՝ 'ի մերկ
գետնի զոր բազում անգամ կոխեալ
էր իմ, տեսանեմ տաՀար իմն զար-
մանագործ Հոյակապ բարձրացեալ
վերացեալ, և ընդ նմին զիս ինքն վե-
րաբերելով Հասանեմ յերկնանման
գմբէթն Հրաշակառոյց, զոր նոր ոմն
Տրդատ արամեան յերկինս զետե-
ղեաց։ Եւ այն որ երբեմն ընդ ան-
բանիցն ջոկս բաժաներ զգետնափոր
նկուղն՝ արդ զաչսն սրակնագոյնս յար-
փենիցն Հեմեցուցանէ կամարս՝ յա-
կանէ յանուանէ ընդ ստեղծողին կո-
չելով զՀայկն և զԱՀագն, զԱ՝ազ-
մաստեղն և զՓառանձնոտին, և ընդ
նոր և ընդ հին ՀանապարՀս արեգա-
կանց անցեալ յառաջեալ՝ յանզգաս-
տից իմն Հասանի Հարկանի ընդ պա-
րիսպն մտաց անանց և ընդ դուռնն՝
ընդ որ Հոգւոյ միայն է անցանել, և
զիւրոց ջանից մրցանակ զիմաստու-
թեանն պսակ կախեալ զնմանէ՝ տա-
կաւ յինքն դառնայ։ Եւ այլ ոմն լու-
ծական դաշտաց նահատակեալ՝ զնոյն
ջուր և ՀանապարՀ և ՀանապարՀին
վարիչ երիվար գործէ 'ի կատսայն
անՀնարին փքոցուցոյց եռացուցեալ,
և զանուանՀելի փողոց ահիապարա-
նոց ծխոյն կալեալ անարգել յոր կոյս
և կամիցի արշաւեցուցանէ զնոր զայն
փրփրերախ նՀանգ ծովային, և ով-
կիական լերանց յաղթեալ Հարթեալ՝
ոլորտից տիեզերաց դիմագրաւէ,
ողջունելով զափունս յոր տակաւին
չէր կոխեալ անիոնջ գարշապարաց
Հայկազնեայ վաՀառականաց։ Իսկ
և միւսն տարաշխարՀական ուղևո-
րութեանց եղեալ մշակ ընդ ցա-
մաք՝ մանրազնին և բանասէր աչօք
անցեալ ընդ աշխարՀս յոր բնութի՛ն
կամ արուեստ Հրաշալիս ցուցանիցէ,
երթեալ Հասանէ 'ի մայրն աշխար-
Հաց և բնութեան և արուեստի. զի-
նուն ուսմանց զխաւար տգիտական
բարբանջմանց Հերձեալ, ջՀիւ ի-
մաստութեան զՀնութիւնն լուսաւո-
րեալ, աշխարՀագէտ մտօք զաւերակ-
սին ընթերցեալ, քննէ և իմանայ
զծածուկս Հարքայ, Ա՛ղմաւրայ, Ա՛ղ-
տաշիսեան և Եդրուանդեան շինից,
զԱ՝առնոյ և զԱ՝նւոյ. նա և յառաջան-
ցեալ խոնարՀաբար ողջունէ զմեծն
Ա՛ասիս, և տիրաբար Հարցանէ քանի՞
Հրեղէն և ջրեղէն զօրութիւնք ձու-
լեցին զվսեմագոյնն լերանց և զառա-
ջին պատուանդան երկնաւորին, քա-
նի՞ցս Հուն անցի ընդ Հարստակող ի-
րանն գործեալ գետք Հրածորանք ըզ-
դաշտս Ա՛յրարատայ տրամացուցին,

կամ որքանիցս ընդ ահաւոր և խոր-
խորին որկոր նորին վերափչմունք ե-
ղեն ծխոյն ծծմբոյ, կամ երբ և ո-
րով տիեզերասասան թնդմամբ ստե-
ղըն նորա միաբուն յերկուս պատա-
ռեցաւ գագաթունս միմեանսայարս՝
'ի ստորև անմեկին զսկզբնական օ-
բէնս զուգութեանն պահելով, յորմէ
պատկառին իբրև 'ի թագաւորէ մե-
ծէ համօրէն լերինք վերնոյն Ասիոյ։

Ասել բաբէ, ցորվայր ձգեն տա-
նին զմեզ հրաշք քաջաց հետևողացն
իմաստութիւն. մի ինչ երկմտեսջիք, զի
և այդ ամենայն ոչ մեծագոյնք իցեն
բարեացն զոր գտջիք յիմաստութիւն.
վասն որոյ և զբարերարան ձեր ան-
մոռացյուշի ունել ցանկալի իցէ ձեզ։
Ընդ նոսին և զերկրորդ բարեաց և
կենաց լեալ ձեզ պատճառս զիմաս-
տութիւն սատարողս, զդաստիարակսն
ձեր, որք բազում ճգամբ անձանց
շահեալ զնոյն 'ի ձեզ գանձել սիրեն,
յանձն առեալ զտաժանագոյնն եր-
կանց՝ զորդիս բնութեան յորդիս ծնա-
նիլ շնորհաց. քանի խնդութիւն և
վարձս վաստակոյն փոխանակիցեք
նոցա՝ եթէ ընդ հլութեան և ընդ
ջանս ձեր տայիք նախատես աչաց նո-
ցա նշմարել զկատարելութիւն կե-
նացդ և զզօրավիգն տկարացեալ ազ-
գին մերոյ, յոր սակս ոչ անխայեն
մատակարարել ձեզ առատութեամբ
զյորդոր և զխրատ, զժամանակ և զա-
նօթ, զքիրտն և զսիրտ։

Զուք ինքնին պատմեցէք աս-
տանօր զքանչելի օրինակ նոցա յան-
կաւոր ջանիցն, յոր տեսէքդ և վայե-
լէք, զանխոնջ խնամս Հօրն այն մե-
ծի՝ որում յանձնեցայք 'ի բնական
ծնողացդ, որ զմի մի 'ի ձէնջ իբրև
զիւր ձեռասուն սանիկ սիրեաց և գը-
գուեաց. ձայն երախտեաց ածէք հրն-
չեցեք յԱդաքինին և յԱմաստասէրն
կատարեալ, որպիսիս զձեզ կամէրն
լինել 'ի գլուխ ակմբիս կացեալ. և

այժմ... Ո՛հ անժպիտ լսջութիւն
ո՛հ գուժկան լռութիւն՝ որ յանկարծ
զզուարթութիւն ատենիս 'ի սուգս
համակէ. ո՞ւր ես Հայր, զորոյ զգիրկս
և ես ինքն գտի ասպնջական և դայեակ
աղկաղկ հասակիս, յորժամ յաշխարհէ
ուծացեալ, զսիրելեացն որ անդ՝ 'ի
քեզ մոռացայ զանձուկ. ո՞ւր դադա-
ռես աստուածպետականդ գահագը-
լուխ կաճառոյս. ահա զպատկեր քո
զնոյն օրինակ քաղցրահայեաց քաղ-
ցրաժպիտ տեսանեմ որպէս և միշտն,
և հիմ ոչ բարբառիս այսօր, զմէ զօրհ-
նաբաշխ աջդ ոչ կարկառես զբոյի-
նասէր ակմբովս... Ասել զի՞նչ ասեմս,
զա՞ջն, զձա՞յնն. ահա բոլոր բովան-
դակ հոգին այն պատկեր ճշգրիտ Հո-
գւոյն հեզութեան հովանացեալ կա-
լեալ ունի զտաճարս, և ընդ համայն
ակնարկեաց մերոյ մի մի ձայնս և յոր-
դորս լսեմք յիմաստասիրութիւն ջանս.
ինքն գողացեալ յըղձից մերոց 'ի ձեռն
հզօր պաշտպանացն՝ 'ի գլուխ երկնա-
ւորին ճեմի Սուկաւայ՝ զցօղս օրհ-
նութեց առուաբար զողջոյն Հայաս-
տանեօքս հոսելով. քաջապէս զըն-
թացս բարեպաշտութեան և զիմաս-
տասիրութիւն կատարեալ, ընդ Ամ-
խիթարայ և ընդ Գրիգորի երթեալ
հանգչի զՀանգիստն այնչափ քաղցր՝
որչափ ոք միամտութեամբ վաստա-
կեցաւ աստանօր վասն Աստուծոյ և
վասն ազգին իւրոյ. զՀանգիստն նմա
յոյժ արժանաւոր յետ յիսնամեայ նո-
րա այսպիսի վաստակոց, յետ չորիցս
ընդ արեգական ծրիւն անցեալ 'ի
գոգն ովկիանու վասն բարւոյ ազգին
դիմագրաւելոյ, յետ քսանամեայ ճը-
գանցն 'ի բարգաւաճանս ուխտին իւ-
րոյ՝ որով զազգն բարգաւաճել գիտէր.
յետ զյոգունց մոռացեալ և զ1500
ամաց մահացեալ նախնեաց մերոց մը-
տաւոր յիշատակս առաջին անգամ 'ի
լոյս ընծայելով տպագրութեան. յետ
հնգետասանամեայ մարմնոյն վշտա-
կիր ցաւոց, որով համբերութեան նոր
գաղափար ընծայեցաւ աշխարհի. յետ
երկոտասանամեայ անդուլ խոկմանց

1 Գերապայծառ Սուքիաս Վ. Սոմալեան Ար-
հիեպիսկոպոս և Աբբայ, որ 'ի 10 փետր. տարւոյս
հանգեաւ 'ի տէր։

և գործոց 'ի զարգացումն վարժարա-
նաց յանձնելոց 'ի խնամն նորին։ Ա.յն
խնամք անխոնջ հոգւոյն բարեսիրի
յաւերժ յիշատակ հայկեան դիւա-
նաց, այն խնամք ոչ թողին զսիրտ նո-
րա մինչև 'ի մարմնին էր. անբծութի՛ն
հոգւոյն՝ հարեալ 'ի դէմսն խաղաղա-
կանս, ընդ որ զուարթունք զինքեանս
իբրև 'ի հայելւոջ կերպարանէին մինչ
'ի մահահանգիստ քարձին հանգչէր,
ոչ մոռացաւ 'ի պայծառ և յաստուա-
ծամուխ տեսութի՛ս յետին ժամուցն՝
զսրբութի՛ սիրեցեալ իւր օթարանս
իմաստութեան ազգին. սահեալ ընդ
մէջ մահու և անմահութեան՝ հազիւ
հազ հայեացս մի, բարբառ մի, շար-
ժուած մի այլ մնալով 'ի նմա, ահե-
կին օժանդակութի՛ կանգնէր զաջն՝
որով զկէս ատենիս 'ի պաշտօնեայս
Ա.ստուծոյ էօծ, և զամենեսին օրհնու-
թեամբ երկնից պարարէր, և կնքեալ
յօդս՝ ասէր, Օ.՛րհնեմ զդպրոցն...
Օ.՛րհնութի՛ւն զոր անդէն հրեշտա-
կաց յափշտակեալ դողդոջուն ձայնիւն
հաստատեցին զդպրոցն մեծ. օրհնու-
թի՛ւն որ ցարդ բարբառի 'ի սիրտս
մեր և 'ի սրահս վարժարանիս. օրհ-
նութի՛ւն որ գրաւական աննախանձ
սիրոյն իւրոյ 'ի վերանալն յերկրէ՝ յա-
ւոյց փոխանակ իւր Ա.ւաջնորդ մեզ և
յառաջացուցիչ տանս Ա.որգոմայ ըզ-
Հայրապետ 'ի քրիստոսեան գահէն
մեծարեալ և 'ի Ա՝ասեացս ողջունեալ
այնպիսի՝ յորմէ արդիւնս մեծամեծս
անհնար է չյուսալ։

Ա.այց զի մի՛ աստանօր բեկբեկեալ
բանիւք և շնչով զվերհից և զարժա-
նաւորաց գովեսաս բովանդակել կար-
ծիցիմ, զայն այլոց թողեալ, ազգ ա-
բարիւ դարձեալ հեռաւոցայդ իմաս-
տութեան, զնոցա զայնքան ջանս տե-
սանելով վասն սիրոյ և օգտի ազգին՝
'ի նոյն սեր և 'ի ջան վառել և ձեզ.
քանզի միայն դոքին կարեն կանգնել
զպարծանս նախնեաց մերոց։

Ա.ա 'ի կանգնել անդ զազգդ՝ օգ-
նական տկարութեանց նորա լինելով,
յերախտահատոյցդ լինել առ բարե-
բարն ձեր և վաստակաւորս և առ
Ա.ստուած գլխովին, ո՞ւմ առաւել
բարեգործակք և եղբայրասիրք գտա-
նիցիք՝ քան թէ ձերոց իսկ անձանց.
զի ամենայն զոր վասն նոցա վաստա-
կիցէք՝ 'ի ձեզ դարձցի ամենայն, և
դուք յառաջ և 'ի վերս քան զենաւս
դուք լինիջիք Ճանապարհք և վայելողք
բարօրութեանց ազգիդ ձերոյ. ձեր
լինիցին մեծամեծ վայելք և խնդու-
թիւնք, յորժամ վերացեալ մտօք տե-
սանիցէք զգամ քան զգամ մերձե-
ցեալ արդիւնս ջանիցդ և զձերոցնմա-
նեայն, և լուիջիք զշնորհաց մաղ-
թանս և զվկայութիւն յազգէդ և
յօտարաց։

Ա.ՐՔաջալերեաց արդ քաջալերեաց
ուսումնավարժ մանկտի Հայաստա-
նեայց. դոյզն և սակաւ են ժամա-
նակք քրտանց և վաստակոց, յաւեր-
ժականք են վայելք հանգստեանն։
Օ՝ն փութա՛, գիրկս արկ իմաստու-
թեան որ կոչէն զքեզ, զի "Ա.իւրաւ
,, երևի սիրողաց իւրոց ,,. 'ի սկզբան
աւուրց քոց Ջանա՛ ընդ Ա.ողոմոնի զնա
ածել քեզ կենաց կցորդ, զի "Ա.նմա-
,, հութիւն է ազգականութիւն նո-
,, րա ,,. Եկ դիր զսիրտ քո 'ի ներքոյ
քաղցր գաւազանի նորա և հովուես-
ցէ զկիրս քո, և վարեսցէ զչարսն որ 'ի
բանսարկուին թելադրութէ՝ յանձնէ
քումմէ, և ապա լուսաւորեսցին
մտացդ աչք. "Օ՛ի յանձն չարա-
,, բուեստ իմաստութիւն ոչ մտանէ ,,.
և ըստ Ա.ուքաղեայ աղերսական բա-
նին, "Ա՝իայն օգնական չարեաց զան-
,, մտութիւն գտի ,,, որ է անիմաս-
տասիրութիւն։ Ա.ուսիր զիմաստութի՛,
և եղիցին լուսաւոր ամենայն Ճանա-
պարհք կենաց քոց, և մի՛ որպէս ըզ-
տգէտսն լինիցիս՝ զորոց ասաց գո-
վեալս մեր Ա՝ագիստրոս. "Ա.մենայն
,, գործառնութիւնք նոցա անվաւե-
,, րականք ,,. ուսիր զիմաստութիւն
և կեցցես ուղղութեամբ, և իբրև
հմուտ և յառաջածանօթ հանդեր-
ձեալ աշխարհին՝ անցանիցես զուար-
թութեամբ, և մի՛ որպէս զթիւրեալ

սքն անիմաստութեամբ իբրև զանա-
սուն 'ի մահՀի խառանեալ և 'ի խըղ-
ՀէՆ դանդաչեալ. քանզի "Կոյր զրկի
,, 'ի Ճառագայթից արեգական, և
,, տգիտութիւն զրկի 'ի կատարեալ
,, կենաց ,, . ուսիր զիմաստութիւն,
վախՀան բանիս, զի և անմահութեն
զոր անդ վայելիցես՝ մնայցէ յիշատակ
և աստէն, որպէս զՀոտ վարդի և զՀա
լուէի որ զկնի ծաղկանցն անցելոց. և
մի լինիցիս նման այնոցիկ "Որոց զի-
,, մաստութեամբ զանց արարեալ՝ ոչ
,, միայն փնասեցան առ 'ի չՀանաչելոյ
,, զբարիս, այլ և զանմտութեան յի-
,, շատակ թողին յաշխարՀի ,, :

Ո՛վ բարեբաղդի Հանդիպեալ դա-
րու և վիՃակի մանկունք Հայաստա-
նեայց, և դուք դաստիարակք իմաս-
տութեան, և դուք բարերարքդ և նո-
րին աՃելութեան պատՃառք, ընթա-
ցարուք իւրաքանչիւր Հաւատարմու-
թեամբ յիւրական շաւիղս ասպարի-
զացն իմաստութեան, զոր ամենա-
խնամ գթութիւն բարձրելոյն եբաց
վերստին 'ի Հայաստան աշխարՀիս.
ահա ընկերք ձեր առաքինիք 'ի գլուխ
ստադին Հասեալ կան պսակաւորք ը
Հանդիսադրին Յիսուսի իմաստու-
թեանն իսկականի Ճեմն առեալ, և
ձեռամբ վարուց ձեզ խրախոյս տա-
լով. այլ և ընթացակիցք գոն ձեր ա-
ռաքինիք անշեղ ակամբ 'ի նպատա-
կէն՝ դիմելով, և ձեզ համարձակու-
թիւն տալով. յաջմէ Հոգիք Հարց ձե-
րոց նախնեաց ընտրելոց սաւառնեալ
զդրօշս ցուցանեն զոսկեղինիկ տառն
ՓԱՌՔ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ. և յահեկէ
անՀուն դասակք ուրուականաց ապա-
գայ որդւոց Հայոց զգեռ տժգոյն զիւ-
բեանց նշանն վերացուցանեն տար-
բացեալ 'ի նմա տառիւքս այսոքիւք,
ՑՈՑՍ ՓՐԿՈՒԹԵԱՆ. և յառաջոյ ինք-
նին տերն Համօրէն սրբովք և հրեշտա-
կօք գրկատարած և պսակամատոյցմնայ
ձեզ գոչելով, ՊՍԱԿՔ ՑԱՂԹԱԿԱՆԱՑ։

Հ. Ղ. Մ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայկական Հնոտնեանց Վրայ։

ԽՈՐՈՒՆԿ բաղձանքները մարդուս սիրտը երկար ատեն որ գրաւեն, շատ մտածող կ'ընեն զինքը. և որչափ ան-ձեռնՀաս ըլլայ իր վառուած փա-փաքանացը Հասնելու, կարծես թէ այնչափ ծանրութիւն ու մտմտուք մը կը տիրէ վրան. ալ անկէ ետքը զուարճութիւնն ալ՝ տխրութիւնն ալ իր սրտեռանդն խորՀրդոցը մէջ կը գըտնէ։ Բնութեան առանձին և սոսկալի ամայութիւնները իրեն միթարական բան մը կուգան, և Հոգին կարծես թէ ինքիրմէ դէպ 'ի Հոն կը քաշուի։

Այսպիսի զգացում մը կուգար նաև իմ վրաս՝ երբոր Մինչերկրական ծովը Հեռուն ձգելով, Հերակլեան արձաններէն դուրս ելայ Ալեքսանդրիոյ վրայ սեպտեմբեր ամսոյն վերջերը։ Այն մեծ ծովուն լայնութիւնը Համեմատ՝ իմ բաղձանքներս ալ ընդարձակ կուգային կրնամ ըսել։ Շատ առտուներ և շատ իրիկուններ նոյնպիսի անբաւ ջրերուն մէջ կը ծփէինք, և նոյն բնութեան ահեղ տեսարանն էր որ մեր չորս դին կը պատէր. թէպէտ կ'ամպոտէր երբեմն երկինքը, երբեմն ալ կը պարզէր, բայց մենք միշտ ան անՀուն ջրերուն կեդրոնը կը գտնէինք զմեզ։ Իրաւ որ ան ահագին երևութին վրայ երկար ատեն պէտք չէր նայիլ՝ առանց յափշտակուելու Հաճոյական խորՀրդոց մէջ. անոնք ալ աս ջրեղէն սահմաններուս վրայ չիյտեմ ինչպէս կ'աւելնային մարդուս միտքը, և անբաւական սիրտը շատ Հեղ կ'երէր կը մրկէր ու կը փղձկէր։ Բնութեան մէջ թռած անձայն Հառաչանքները Հովերը միայն